

Բանալի բառեր¹ հանրային կառավարման համակարգ, պետական բյուջե, հանրային ծառայություններ, օրենսդիր, գործադիր և դատական մարմիններ, պաշտպանության ծախսեր, սուբսիդիաներ, դրամաշնորհներ:

ՀՏԴ 336.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԾԱՐԺԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2012-2016ԹԹ.¹

Ատենախոսության թեմա՝
Ռազմավարական կառավարման արդյունավետությունը հանրային կառավարման համակարգում (ՀՀ Նյու-Յթեր)

Արամ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
Մ. Զոթանյանի ՀՀ ԳԱԱ անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

Գիտական դեկավար՝
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

«Հանրային կառավարում» հասկացությունը համեմատաբար նոր է մտել շրջանառության մեջ իբրև գիտական կատեգորիա և, սովորաբար, ինչպես ամեն նոր գաղափար, ունի տարբեր մեկնաբանություններ: Շատ հաճախ հանրային կառավարումը նույնացվում է պետական կառավարման հետ՝ դրանք դիտարկելով իբրև համանիշներ: Մասամբ սա բացատրվում է անգլերեն գրականության ազդեցությամբ, որտեղ «public» բառը ըմբռնվում է (և, համապատասխանաբար, հայերեն թարգմանվում) «հասարակական», «հանրային», բայց հաճախ նաև՝ «պետական» իմաստով: Սակայն պետական ու հանրային կառավարման տարբերությունը սույլ լեզվական չէ, ավելի շատ իմաստային է, և ամկա են բազում ըմբռնումներ: Ըստ առավել լայն տարածված մոտեցման՝ հանրային կառավարումը ներկայացվում է որպես պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման ամբողջություն: Հանրային կառավարման էության նման մեկնաբանությունը անհիմն չէ, սակայն թերի է, և այդ կատեգորիայի բովանդակությունն ավելի լայն ու տարրողունակ է, քան «պետական կառավարումը» և, որպես երևույթ հանրային կառավարումը հիմնականում բնորոշ է քաղաքացիական հասարակությանը, որի պայմաններում պետական կառավարումն Էվոլյուցիոն (աստիճանական՝ զարգացման շնորհիվ վերաճել է հանրային կառավարման:

Քաղաքացիական հասարակության պայմաններում իշխանությունն ձևավորում են այն քաղաքական կազմակերպությունները, որոնք առավել արդյունավետ կարող են բավարարել մարդկանց պահանջումները: Այսինքն, պետական իշխանությունը շարունակում է մնալ հասարակական դաշինքի արդյունք, իսկ պետական կառավարումը՝ հանրային ծառայության տեսակ ...»²:

Բերված մեջբերումից հետևում է, որ ըստ էության՝ պետական հիմնական գործառույթը հանրային ծառայությունների մատուցումն է հասարակության բոլոր անդամներին: Հասկանալի է նաև, որ այն պայմանավորված է պետության հնարավորություններով և այն միջոցներից ու դրանք տրամադրման և օգտագործման արդյունավետությունից, որոնք մատուցված են բնակչությանը պետության կողմից: Ըստ որում՝ կապված ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հանգամանքներից (թե՛ համաշխարհային և թե՛ տարածաշրջանային բնույթի գործոններից) մատուցվող հանրային ծառայությունների ծավալը և կառուցվածքը փոփոխվում են: Կախված այն հանգամանքից, թե՛ պետության առջև ինչ մարտահրավերներ և խնդիրներ են առաջացել, այն որպես հասարակական դաշինքի շահերի պաշտպան ու հանրային նշանակության ինստիտուտ, պարտավոր է լուծել դրանք անկախ այն բանից, թե՛ դրանք ինչպիսի քաղաքական կամ էլ սոցիալ-տնտեսական, մշակութային կամ այլ բնույթի լինեն:

Ցանկացած երկրում հանրային ծառայությունների մատուցման հիմնական աղբյուրը և գործիքը պետական բյուջեն է՝ երկրի ֆինանսական ծրագիրը, որտեղ նախ ձևավորվում են պետության եկամուտները և ապա սահմանվում դրա ծախսման առանձին ուղղությունները: Պետական բյուջեից կատարված ծախսերն իրենց բնույթով հանրային ծառայություններ են: Իսկ այդ ծառայությունների մատուցման համար պետությունը պետք է ունենա բոլոր այն պայմանները, որոնք հնարավոր կդարձնեն դրանց մատուցումը և դրանք յուրաքանչյուր քաղաքացուն հասցնելը: Խոսքն այն կառավարման համակարգի նյութաիրային միջոցների և մարդկային ռեսուրսների մասին է, որին որ տիրապետում է այս կամ այն պետությունը:

Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայությունների մատուցման հիմնական աղբյուրը (հիմնական, քանի որ քաղաքացիական հասարակության այնպիսի ինստիտուտներ, որոնք նույնպես մտնում են հանրային կառավարման համակարգի մեջ, ինչպիսիք են ՀԼՄ-երը և հասարակական կազմակերպությունները կարող են ունենալ ֆինանսավորման այլ աղբյուրներ: Ի դեպ, պետական և տարածքային կառավարման, և տեղական ինքնակառավարման մարմինները բացի, պետական բյուջեից, նույնպես կարող են ունենալ օրենքով չարգելված դեպքերում եկամտի այլ աղբյուրներ) ՀՀ պետական

¹ Հոդվածում ներկայացված թվային տվյալները կազմվել և հաշվարկվել են՝ ՀՀ 2012-2016թթ. պետական բյուջեների տարեկան հաշվետվությունների մասին ՀՀ օրենքների հիման վրա:

² Յու. Սուվարյան, Վ. Միրզոյան, Հանրային կառավարման տեսություն և պատմություն, Եր.: Գիտություն, 2013, էջ 12-14

բյուջեն է, որի նախագիծը մշակում է ՀՀ կառավարությունը, և դրա ներկայացմամբ հաստատում է ՀՀ Ազգային ժողովը՝ օրենքի տեսքով:

ՀՀ 2012-2016թթ. պետական բյուջեի փաստացի ծախսերի, ճշտված պլանի կատարողականի, և ծախսերի կառուցվածքի գործառնական դասակարգմամբ բերված տվյալներից հետևում է, որ նշված ժամանակահատվածում պահպանվել են որոշակի օրինաչափություններ, որոնցից առաջինն այն է, որ «Սոցիալական պաշտպանության» ծախսային հոդվածը միշտ ունեցել է առաջատար դեր և այն գտնվել է համեմատաբար կայուն միջակայքում (26.0%-ից՝ 2013թ. մինչև 29.0%, 2012թ.), իսկ 2014-2016թթ.՝ 27.2%-ից (2015թ.) մինչև 27.7% (2014թ.): Նկատի ունենալով սոցիալական պաշտպանության ծախսերի մեծությունը և դրանց կայունությունը նշված ժամանակահատվածում, կարելի է 2012-2016թթ. ՀՀ պետական բյուջեներն անվանել սոցիալական, դրանով իսկ ապահովելով ՀՀ Սահմանադրության առաջին հոդվածի այն դրույթը, որ Հայաստանը սոցիալական պետություն է:

ՀՀ պետական բյուջեների (2012-2016թթ.) ծախսերի երկրորդ հոդվածը վերաբերում է «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին», որոնց բաժինը ունեցել է ավելացման միտում՝ 2012թ. 16.0%-ից այն 2016թ. հասել է 20.2%-ի: Նշված երկու ծախսային հոդվածների բաժինները 2012թ. կազմել են պետական բյուջեի փաստացի ծախսերի 45.0%-ը, 2013թ.՝ 42.5%-ը, 2014թ.՝ 45.3%-ը, 2015թ.՝ 47.2%-ը, 2016թ.՝ 47.6%-ը: Այսինքն, այս երկու ծախսերի գումարային բաժինը նույնպես ունեցել է կայուն մեծություն և աննշան աճի միտում:

Իր մեծությամբ ծախսերի հաջորդ ուղղությունը «Պաշտպանություն» է, որի տեսակարար կշիռը գտնվել է 14.1%-ից (2015թ.) մինչև 15.6%-ի (2016թ.) սահմաններում: Այս ծախսերի մեծ բաժինը պայմանավորված է հարևան երկրի հետ ռազմական իրավիճակի պահպանման հետ, որը զգալի ռեսուրսներ է պահանջում պետությունից: Բավական է նշել, որ օրինակ 2016թ. պետական բյուջեի փաստացի ծախսերի կազմում պաշտպանության ծախսերը «համարժեք» են եղել տնտեսական հարաբերությունների (8.3%), բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների (1.8%), շրջակա միջավայրի պաշտպանության (0.3%), հանգստի, մշակույթի և կրոնի (1.8%), հիմնական բաժիններին չհասավող պահուստային հիմնադրամների (ֆոնդերի) ծախսերին (13.2%):

Կարևոր է նաև ընդգծել, որ ՀՀ պետական բյուջեի ծախսերը 2012-2016թթ. ունեցել են անընդհատ աճի միտում (այդ աճը 2016թ. 2012թ. Համեմատ՝ կազմել է 144.3%) (տես՝ աղյուսակը):

Հայաստանի Հանրապետության 2012-2016թթ. պետական բյուջեի մեկ այլ (տնտեսագիտական) դասակարգմամբ՝ ընթացիկ ծախսերը կազմել են ընդամենը ծախսերի 87.0%-ից (2012թ.) մինչև 89.2%-ը (2014թ.), ընդ որում՝ ընթացիկ ծախսերի մեծ մասը (25.8%-ից՝ 2013թ. մինչև 28.7%-ը՝ 2012թ.) բաժին է հասել սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին: Ընթացիկ ծախսերի երկրորդ խոշոր հոդվածը վերաբերում է ապրանքների և ծառայությունների ձեռք բերմանը, որն ունեցել է անկման միտում (2012թ. 20.3%-ից 2016թ. հասել է 11.2%-ի): Երրորդ խոշոր ընթացիկ ծախսերի բաժինը վերաբերում է դրամաշնորհներին (որը գտնվել է 10.7%-ից (2013թ.) 11.3%-ի (2014թ.) սահմաններում:

Նկատենք նաև, որ ՀՀ պետական բյուջեի մեծությամբ երկրորդ ծախսային մասի բազան ձևավորվում է հիմնականում հարկային եկամուտներից և պետական տուրքերից: Այսպես, նշված հոդվածի հաշվին է ձևավորվել 2012թ. ՀՀ պետական բյուջեի եկամուտների 79.2%-ը, 2013թ.՝ 93.4%-ը, 2014թ.՝ 93.0%-ը, 2015թ.՝ 91.4%-ը, 2016թ.՝ 92.2%-ը: Պաշտպանության դրամաշնորհների և այլ եկամուտների բաժինը տարբեր տարիների տատանվել է 5%-ից (2013թ.) մինչև 8.6%-ի (2015թ.) սահմաններում, ինչը մեծ տեսակարար կշիռ չէ:

Երկրի ֆինանսական վիճակի կայունության ապահովման կարևոր պայմաններից է պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) մեծությունը և դրա ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը: Հատկապես վերջին տարիներին (ուսումնասիրված՝ 2012-2016թթ. ժամանակահատվածի) այն նկատելիորեն ավելացել է: Այսպես, եթե 2012թ. ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը) կազմել է 59.9 մլրդ դրամ, ապա այն 2015թ. կազմել է 241.3 մլրդ դրամ, իսկ 2016թ.՝ 278.0 մլրդ դրամ: Բոլոր նշված տարիներին դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման հիմնական աղբյուրը եղել են արտաքին աղբյուրները (բացառությամբ 2014թ.):

ՀՀ պետական բյուջեի փաստացի ծախսերի և դրանց կառուցվածքի ըստ հանրային կառավարման մարմինների 2012-2016թթ. տվյալներով ծախսերի ամենամեծ բաժինը հասել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայությանը (21.29%): Ընդ որում՝ այդ բաժնի մակարդակը նախորդ տարիների համեմատությամբ էական փոփոխություններ չի կրել: Երկրորդ տեղը զբաղեցրել է Պաշտպանության նախարարությունը (15.43%), որի ծախսերի բաժինը ևս ունեցել է կայուն տեսակարար կշիռ: Ֆինանսների նախարարության ծախսերի բաժինը կազմել է 14.43%: Նշված երեք նախարարությունների ծախսերի բաժինը 2016թ. պետական բյուջեի փաստացի ծախսերի կառուցվածքում կազմել է այդ ծախսերի կեսից ավելին՝ մոտ 51.15%: Բերված տվյալներից ակնհայտ է, որ ծախսերի այնուծի բաժինը հասնում է գործադիր իշխանության մարմիններին:

ՀՀ 2012-2016թթ. պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման միջոցով արժեքավոր տեղեկություններ են հաղորդվում ծախսերի ավելի մանրամասնեցված մեծությունների վերաբերյալ: Այն հնարավորություն է տալիս, մասնավորապես, «հետևելու» հանրային կառավարման մարմինների «պահպանման» ծախսերի մեծությունների փոփոխությանը, դրանց շարժին և պատկերացում կազմելու դրանց ավելացման կամ նվազեցման վերաբերյալ կամ ավելի պարզ ասած, հասարակությունը ինչպիսի ծախսեր է կատարում այդ ուղղությամբ:

Աղյուսակի տվյալները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները.

- նշված ժամանակահատվածում պետական բյուջեի ընդամենը ծախսերն ավելացել են 144.0%-ով կամ տարեկան միջին հավելածը կազմել է 8.8%, ինչը նկատելիորեն բարձր է ՀՀ տնտեսական աճի միջին ցուցանիշից,
- ինչպես «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին», այնպես էլ «Հասարակական կարգի անվտանգության և դատական գործունեության» ծախսերն ավելացել են ավելի արագ տեմպերով (համապատասխանաբար՝ 182.0% և 156.9%, հատկապես ծախսերի առաջին խումբը գերազանցել է ընդամենը ծախսերին շուրջ 2 անգամ, իսկ երկրորդը 109.0%-ով), ինչն էլ հանգեցրել է այդ ծախսերի տեսակարար կշիռների ավելացմանն ընդամենը ծախսերի կազմում (համապատասխանաբար աճը կազմել է 1.3 և 0.7 տոկոսային կետ),
- «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ծախսերի կազմում «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ» ծախսերի տեսակարար կշիռը 41.6%-ից թեև 2015թ. հասել է 47.7%-ի (աճը 6.1 տոկոսային կետ, ինչը բացասական երևույթ է) 2016թ. հասել է 39.2%-ի (նվազումը նախորդ տարվա նկատմամբ 8.5 տոկոսային կետ, իսկ 2012թ. նկատմամբ 2.4 տոկոսային կետ, ինչը դրական երևույթ է և պետք է շարունակել),

Հայաստանի Հանրապետության 2012-2016թթ. պետական բյուջեներով իշխանության տարբեր թևերի պետական կառավարման համար կատարված փաստացի ծախսերը և դրանց կառուցվածքը (մլն դրամ)³

Ծախսերի դասիչները անվանումները	2012	2013	2014	2015	2016	2016թ. 2012-ի նկատմամբ, տոկոսային կետ
Ընդամենը ծախսեր	1,006,102.2	1,142,890.4	1,235,054.4	1,408,996.5	1,449,063.6	144.0
	100	100	100	100	100	-
այդ թվում՝						
01 բաժին- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	160,488.8	188,135.7	217,276.1	281,397.0	292,117.4	182.0
	16,0	16,5	17,6	20,0	20,2	4,2
	100	100	100	100	100	-
այդ թվում՝						
01 խումբ- Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ	66,732.7	81,863.0	90,698.4	131,312.1	114,446.2	171.5
	6,6	7,2	7,3	9,3	7,9	1,3
	41,6	43,5	41,7	47,7	39,2	-2,4
01 դաս- Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	14,251.1	14,459.4	17,238.3	23,004.9	23,067.7	161.9
	1,14	1,27	1,40	1,63	1,59	0,45
	21,4	17,7	19,0	17,5	20,2	-1,2
03 դաս- Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	76,668,6	91,399.6	104,793.0	122,024.7	120,304.5	156.9
	7,6	8,0	8,5	8,7	8,3	0,7
	100	100	100	100	100	-
այդ թվում՝						
03 խումբ- Դատական գործունեություն և իրավական պաշտպանություն	8,685.9	8,229.7	9,150.1	11,128.9	11,123.9	128.1
	0.86	0.72	0.74	0.80	0.76	0.10
	100	100	100	100	100	-
01 դաս - Դատարաններ	8,163.2	7,706.8	8,631.5	10,568.1	10,446.3	128.0
	0,81	0,67	0,70	0,76	0,71	-0,01
	94,0	93,6	94,3	95,0	93,9	-0,1
02 դաս - Իրավական պաշտպանություն	522,7	522,9	518,5	560,8	677,6	129,6
	0,05	0,05	0,04	0,04	0,05	-
	6,0	6,4	5,7	5,0	6,1	0,1

• «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» ծախսերի բաժինը ընդամենը ծախսերի կազմում 2012թ. 1.14%-ի փոխարեն 2016թ. կազմել է 1.59% (աճը 0.45 տոկոսային կետ), իսկ այդ ծախսերի բաժինը «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ» ծախսերի կազմում նվազել է 1.2 տոկոսային կետով՝ 21.4%-ից հասնելով 20.2% -ի (Նախորդ տարվա 17.5%-ի փոխարեն): Այս ծախսերի (ընդամենը ծախսերի կազմում) նկատելի աճ գրանցվել է 2015թ., երբ այն 2014թ. 1.40%-ից հասավ 1.63%-ի, ինչը կապված էր այդ մարմինների «վերին օղակների» աշխատավարձերի նկատելի բարձրացման հետ,

• «Դատական գործունեություն և իրավական պաշտպանություն» ծախսերը ընդամենը ծախսերի համեմատ ունեցել են աճի ավելի փոքր տեմպ (128.1%), ինչն էլ հանգեցրել է այդ ծախսերի բաժնի նվազեցմանը (0.10 տոկոսային կետով) ընդամենը ծախսերի կառուցվածքում, իսկ «Դատարաններ» ծախսերի բաժինը ընդամենը ծախսերի կազմում 0.81%-ից հասել է 0.71 տոկոսի, այդպիսով նվազելով 0.10 տոկոսային կետով, իսկ «Դատական պաշտպանություն» հոդվածի բաժինը նշված տարիներին մնացել է անփոփոխ,

• «Դատական գործունեություն և իրավական պաշտպանություն» ծախսերի կազմում «Դատարաններ» ծախսերի հոդվածը նշված տարիներին «Դատական գործունեություն և իրավական պաշտպանության» ծախսերի հոդվածի կազմում ունեցել է կայուն տեսակարար կշիռ, իսկ 2016թ. 2012թ. համեմատ նվազել է 0.1 տոկոսային կետով:

Այսպիսով, եթե գումարենք «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» և «Դատական գործունեություն և իրավական պաշտպանության ծախսերը», ապա կունենանք հետևյալ պատկերը. 2012թ.՝ 22937.0 մլն դրամ (կամ ընդամենը ծախսերի 2.0%), 2013թ.՝ 22689.1 մլն դրամ (1.99%), 2014թ.՝ 26388.4 մլն դրամ (2.14%), 2015թ.՝ 34135.8 մլն դրամ (2.43%), 2016թ.՝ 34191.6 մլն դրամ (2.35%): Այսինքն, նշված ծախսերի բաժինը թեև 2016թ.-ին նախորդ տարվա նկատմամբ նվազել է 0.08 տոկոսային կետով, սակայն 2012թ. համեմատ ավելացել է 0.35 տոկոսային կետով:

Հայաստանի Հանրապետության 2016թ. պետական բյուջեի ծախսերի ավելի մանրամասնեցված տնտեսագիտական դասակարգումից հետևում է, որ ճշտված պլանի համաձայն (146,014.6 մլն դրամ), փաստացի վճարված աշխատավարձի մեծությունը (142,392,2 մլն դրամ) կազմել է 97.5% կամ ընդամենը ծախսերի (1,449,033.6 մլն դրամ) 9.8%-ը կամ ընթացիկ ծախսերի 11.1%-ը: Բերված տվյալների համադրումը 2012-2015թթ. ՀՀ պետական բյուջեի ծախսերի մանրամասնեցված տնտեսագիտական դասակարգման հետ, թույլ է տալիս կատարել հետևյալ եզրահանգումները.

• Նկատելիորեն աճել են պետական բյուջեից վճարվող տոկոսավճարները. այսպես, եթե 2012թ. դրանք կազմել են 40,666.8 մլն դրամ (որից 23,238.8 մլն դրամը ներքին տոկոսավճարներ, իսկ 17,427.9 մլն դրամը՝ արտաքին տոկոսավճարներ),

³ Աղբյուրը՝ կազմվել է հաշվարկվել է՝ ՀՀ 2012-2016թթ. պետական բյուջեների տարեկան հաշվետվությունների մասին ՀՀ օրենքների հիման վրա:

ապա 2013թ. համապատասխանաբար՝ 46745.9 մլն դրամ, 29,921.5 մլն դրամ և 6,824.4 մլն դրամ, 2014թ.՝ 61,644.1 մլն դրամ, 33,056.7 մլն դրամ, 28,587.4 մլն դրամ, 2015թ.՝ 74,084.1 մլն դրամ, 32,179.4 մլն դրամ, 41,904.7 մլն դրամ, 2016թ.՝ 98,276.4 մլն դրամ, 42,032.2 մլն դրամ, 56,244.2 մլն դրամ կամ այլ կերպ ասած՝ 2016թ. 2012թ. համեմատ տոկոսավճարներն ավելացել են համապատասխանաբար՝ 241.7%, 180.9%, 322.7%: Եթե 2016թ. ՀՀ պետական բյուջեի ընդամենը ծախսերի աճը կազմել է 144.0%, ապա տոկոսավճարների աճի առաջանցիկ գործակիցը կկազմի 1,678, ինչը խիստ անցանկալի գործոն է, քանի որ այն այլ հավասար պայմաններում «ծանրացնում» է հանրային մյուս ծառայությունների ծախսերի ֆինանսավորումը: Բացի այդ, 2012թ. տոկոսավճարների վճարման աղբյուրների կազմում ներքին աղբյուրները կազմել են 57.1%, ապա 2016թ. այդ ցուցանիշը կազմել է 42.8%, ինչը ցանկալի զարգացում է այն իմաստով, որ ներքին ֆինանսավորման աղբյուրներն ավելի թանկ են, քան արտաքինը,

- Նկատելի է նաև սուբսիդիաների նկատելի աճը, դրանք 2012թ. 21,092.9 մլն դրամից 2016թ. հասել են 120,842.9 մլրդ դրամի (աճի տեմպը 572.9%, կամ նկատելիորեն ավելի բարձր պետական բյուջեի ընդամենը ծախսերից): Այդ ծախսերի մեծ մասը (116328.3 մլն դրամ կամ այդ ծախսերի 96.3%-ը), հատկացվել է պետական կազմակերպություններին, ինչն անցանկալի երևույթ է, այն առումով, որ դրանց մեծ մասը պետական առևտրային կազմակերպություններ են (բաժնետիրական ընկերություններ են) և փոխանակ աշխատեն շահույթով, ստանում են հսկայական չափի վնասներ, ինչի պատճառով պետությունը «ստիպված» փոխհատուցում է այդ ծախսերը,

- ՀՀ պետական բյուջեի ընդամենը ծախսերի համեմատ ավելի ցածր աճ են գրանցել դրամաշնորհները (140.2%)

- 2016թ. 2012թ. համեմատ սոցիալական նպաստների և կենսաթոշակների ծախսերը 288532.1 մլն դրամից հասել են 405062.7 մլն դրամի (աճը կազմել է 140.4%): Ընդ որում այդ ծախսերի մեծ մասը բաժին է ընկնում կենսաթոշակներին (2016թ. 274,983.5 մլն դրամ, կամ այդ ծախսերի 67.9%-ը, 2012թ. 68.4%-ի փոխարեն): Ծախսերի երկրորդ մեծ բաժինը կազմում են բյուջեից տրվող սոցիալական օգնության դրամական արտահայտությամբ նպաստները, որոնք 2012թ. 79,094.8 մլն դրամից 2016թ. հասել են 130,044.1 մլն դրամի (աճը 164.4%):

Այսպիսով, կարելի է գալ այն հետեւության, որ հատկապես վերջին տարիների ընթացքում ՀՀ-ում ստեղծվել է ամուր ֆինանսական բազա, որը հնարավորություն է տալիս պետությանը, իր բնակչությանը և հանրային հատվածին ապահովել անհրաժեշտ և բավարար որակի հանրային ծառայություններով:

Օգտագործված գրականություն

1. Յու. Սուվարյան, Վ. Միրզոյան, Հանրային կառավարման տեսություն և պատմություն, Եր.: «Գիտություն», 2013, էջ 12-14
2. «Հայաստանի Հանրապետության 2012թ. պետական բյուջեի հաշվետվության մասին» ՀՀ օրենք
3. «Հայաստանի Հանրապետության 2013թ. պետական բյուջեի հաշվետվության մասին» ՀՀ օրենք
4. «Հայաստանի Հանրապետության 2014թ. պետական բյուջեի հաշվետվության մասին» ՀՀ օրենք
5. «Հայաստանի Հանրապետության 2015թ. պետական բյուջեի հաշվետվության մասին» ՀՀ օրենք
6. «Հայաստանի Հանրապետության 2016թ. պետական բյուջեի հաշվետվության մասին» ՀՀ օրենք

*Ներկայացվել է 10.08.2017թ.
Ընդունվել է տպագրության 31.08.2017թ.*